

նշաններով: Մինչև անգամ կը հաւաքէին հրացանի զնդակներն՝ բժժանքներ շինելու համար: Եթէ զնդակը զինուոր մը սպաննած ըլլար, գտնողին համար մեծայարգ դաս մը կ'ըլլար. իսկ եթէ միայն վիրաւորած ըլլար, անոր արժէքը նուազ էր: Ընդհակառակն պահպանելու կարողութենէ զուրկ կը համարուէին սուրբի և շրարների կտորները, և զինուորները կը բաւականանային իբր յիշատակ բարեկամներու և ազգականներու զրկելով:

Պատերազմի դաշտէն հետո ալ քիչ շատ նոյն բանը կը պատահէր: Օղային ուրախութեան ժամանակ Բարիզի փողոցները կը ծախէին բախտ բերող փոքր մետաղ մը, որ երկու ապակիներու մէջ կը պարունակէր գեղնորակ լաթի կամ կուտաբերգայի կտոր մը: Պողոտաներու մէջ զանոնք ծախողներու հաւաստումին համեմատ թէ՛ մին և թէ՛ միւս կտորը կը պահէին ուրախութենէ: Իսկ որոնք որ տեղեկութիւն ուզէին կտորներուն այդ ունեցած զօրութեան վրայ, իրենց կը բացատրուէր թէ գեղնորակ լաթի կտորը գերմանական սաւառնակի կտուէն էր, իսկ կուզարեգայի կտորը օգապարիկէն: Բնականաբար այս փոքրիկ առևտուրը շատ մարդիկ հարստացուց: Մարդկային նանրապաշտութիւնը ամէն ինչ կրնայ կարելի ընել:

* * *

ՊՈՒԿԱՐԱՀԱՅՈՅ ՏԱՊԱՆԱԳԻՐՆԵՐԸ



Տիար Յ. Քիրտեան գովելի եռանդով ժամանակէ մ'ի վեր կը հրատարակէ ազգային գերեզմանատուներու մէջ գտած ու կորսուելու դատապարտուած տաղանազիրները, որոնք արդարեւ թանկագին նիւթեր կը պարունակեն Ազգ. պատմութեան համար:

« Բազմալէպ » ի ապրիլ ամսաթիւին մէջ գտնուած էր Ֆիլիպէի և Ալտօսի, Պուրկազ և Վօֆիա գտնուած Հայ տաղանազիրները, և ասոնց կարգին՝ յիշած էր թէ Ֆիլիպէի Ս. Գէորգ Եկեղեցւոյ թուղթերուն մէջ գտած է հրատարակածներուն 48 և 50ր:

Այս վերջինը՝ կը փութամ յայտնել՝ թէ կը պատկանի Իսկիւտար Սելամիէի Ս. Խաչ Եկեղեցւոյ հիմնադիր Տէր Աբրահամ Քահանային, որ կը հանգչի Եկեղեցւոյ պարտէզը:


Սխալ և պակասաւոր ընդօրինակութիւն մ'է Տիար Յ. Քիրտեանի այս հրատարակածը, որուն ճիշդ ու ամբողջականն է հետեւելը:

Որ վասն. անշափ. սիրով. քոյին
Բանդ կուտէ. առեր. մարմին
Բեւեռեցար. կենաց. փայտին
Շիրիմս. այս. հարկ. հողային
Մեծաւ, պատուով. եղաւ. մարմին
Աղաչանօք. սրբոյ. խաչ-ին
Մաղթեա. ով. սուրբ Աստուածած-ին
Թողուլ. գմեզս. անձանց սորին
Տը. Աբրահամ Քահանային
Եկեղեցւոյս. յոգնեբախտին
Չի. հոգով. չափ. այս սուրբ խաչին
Աշխատ. եղև. լուսահոգին
Որք. ընթեռնուք. յօժարագին
Լիով. սրտիվ. դուք. զոգորմին
Հազար. հարիւր. եօթանասին
Վեցումն. եղև. վախճան սորին
Որք. հանդիպիմք. ի տապանիս
Ասել պարտիմք. հայր մեր երկինս.
ՌՃՀԶ.

Սոյն տապանագիրը հրատարակած է արդէն Տ. Հմայեակ Քահանայ Էքսէրճեան, Ս. Խաչ Եկեղեցւոյ հաստատութեան Երկարիւրամեակին առթիւ գրի առած Հատորիկին մէջ:

Տէր Աբրահամ Քահանայի քովը թաղուած է՝ 1730ին իւր Երեցուհին, որ ունի տապանագիր:

Փարիզ S. P. P. ՎԱՆԱՄ Յ. ԹՈՐՈՍԵԱՆ



ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

ՀԱՄԱՍՏԵՂԻ «ԱՆՁՐԵՒ» Ի ԱՌԹԻՒ՛



Երբ ուզենք խօսիլ Համաստեղի նոր հրատարակած « Անձրեւ » ի վրան, մենք ստիպուած կ'ըլլանք և անդրադառնալ անոր « Գիւղ » ի մասին: Երկու հատոր, երկու անուն, բայց մէկ զիրք, մէկ հոգի, մէկ սիրտ: « Անձրեւ » կոչումը պատահամամբ է. որովհետեւ առաջին վիպակը այդ վերնագիրը կը կրէ: Մինչդեռ նոյն Գիւղն է, որ կը կազմէ և երկրորդ գրքին էութիւնը:

Անձրեւի վիպակներէն ոմանք արդէն ինձ ծանօթ էին զանազան հանդէսներու միջո-

1. Հրատարակութիւն Imp. de Navarre. 5 Rue des Gobelins-Paris XIII. Մտքուր Քղթի վրայ, մարգարտաշար զրերով, նման « Գիւղ » հատորին, 227 էջով, կը պարունակէ ԺԲ. վիպակներ: